



FUNDAÇÃO  
CALOUSTE  
GULBENKIAN

Հրատարակուել է  
Գալուստ Կիւլպենկեան հիմնարկութեան  
հովանաւորութեամբ

# ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 1-12

ՅՈՒՆՈՒԱՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

ձԻԷ. ՏԱՐԻ 2013

## ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԻՈՐՉԻ ՋԵՌԵՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԿԵՍԱՐԻԱՅՈՒՄ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ ԲԱԳԱԻԱՆՈՒՄ

Սարի-Լուիզ Շումու

(Մ.-Լ. ՇՕՄՈՆ, Հետազոտություններ Հայաստանի պատմության վերաբերյալ Սասանեան տիրապետության հաստատումից մինչև թագաւորութեան դարձը, Փարիզ, 1969, Գլուխ VII)\*

Ազգաթանգեղոսի Պատմութեան տարբեր խմբագրութիւններում սուրբ Գրիգորի ուղեւորութիւնը Կեսարիա ներկայացուած է որպէս իսկական արշաւանք՝ ռազմական ողջ կազմով հանդերձ<sup>1</sup>: Ըստ Յուս. վարքի

[ալսուհետեւ՝ Vg - թարգմ.] վկայութեան՝ զօրախմբի կազմում կար մինչև երեսուն հազար այրուձի, չհաշուած մեծաթիւ հետեւակը<sup>2</sup>: Ըստ նոյն աղբիւրի՝ ճանապարհորդութեան ե՛լ նիւթական նախապատրաստութիւնը, ե՛լ ղեկավարութիւնը վստահուած էր Հայոց սպարապետ եւ Տրդատ արքայի ամենահաւատարիմ հետեւորդ Արտաւազդ Մամիկոնեանին<sup>3</sup>: Բացի այդ,

\* Ֆրանսիացի նշանաւոր իրանագետ Մ.-Լ. Շոմոնի (Marie-Louise Chaumont) "Recherches sur l'histoire d'Arménie de l'avènement des Sassanides à la conversion du royaume" հիմնարար մեկնադրութեան (Paris, 1969, 197 pp.) այս վերջին՝ VII գլխի ("Le sacre à Césarée et le baptême à Bagawan", էջ 147-164) թարգմանութիւնը եւ ծանոթագրումները (քառակուսի փակագծերում) մեր հանդէսի պատուէրով կատարել են Նազենի Ղարիբեանը եւ Ալեքսան Յակոբեանը:

1 Սոյն գլխում քննուող իրադարձութիւնների մասին տե՛ս Ազգաթանգեղոսի հայերէն բնագիրը (Վեներիկի հրատ., էջ 590-607 [հմմտ. Ազգաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխ. Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909, էջ 393-443, § 757-846 - թարգմ.] եւ նրա լուսարէն տարբերակը (հրատ. P. de Lagarde [տե՛ս Agathangelus und die Akten Gregors von Armenien, - "Abhandlungen der königliche Gesellschaft zu Göttingen", XXXV (1887)], էջ 64-76 [հմմտ. G. Lafontaine, La version grecque ancienne du livre arménienne

d'Agathange (édition critique), Louvain, 1973, էջ 317-325 - թարգմ.], հմմտ. Vg, 123-168 եւ Va, 111-156 (G. Garitte, Documents pour l'étude du livre d'Agathange, Rome, 1946, էջ 83-100):

2 Vg 124 (Garitte, էջ 83-84): Այս թիւն Արար. վարք-ում (Va, § 112) իջեցուած է մինչև երեք հազարի (նոյն տեղում, էջ 83):

3 Vg, նոյն տեղում, Va, նոյն տեղում: Մենք մեջբերում ենք այս տեղեկութիւնն ըստ առաջինի. Ἀρταβάνου, ὁ τῶν Μαμακουνιανῶν γενεάρχης καὶ ἀσπαράπτης ὁ πάσης Ἀρμενίας, αὐτὸς προηγείτο· ὅστις παρεσκευάζεν τινὰς καὶ προτρέχειν αὐτοῦς εὐτρέπιζεν τὴν δαπάνην ἐνίοις καὶ χωρίοις τε καὶ τόποις [«Խումբը գլխատրում էր Արտաւազդ Մամիկոնեից ազգապետը՝ ամբողջ Հա-

Արաբ. վարք-ից [այսուհետև՝ Va – թարգմ.] պարզուում է, որ զօրքերի հրամանատարութեան համար նշանակուած էին երկու *procuratores regis*<sup>4</sup>:

Գրիգորին նստեցնում են արքայական կառքը, որը զարդարուած էր ոսկով ու թանկարժէք քարերով եւ որին լծուած էին (զուցէ, իրադարձութեան առիթով) սպիտակ ջորիներ: Տասնվեց բարձրատուճիկ անձինք՝ տանուտէր նախարարներ, աւագ պաշտօնեաներ, արքայական խորհրդի անդամներ, ուղեկցում են հայոց առաքեալին<sup>5</sup>:

յաստանի սպարապետը: Նա ոմանց առանձնացրել էր եւ նախօրօք ուղարկել տարբեր տեղեր եւ վայրեր՝ անհրաժեշտ նախապատրաստութիւնը տեսնելու». այս, ինչպէս եւ Մ.-Լ. Ծօսնոնի բնագրի ֆրանսերէնի փոխարէն հայերէն թարգմանութիւնները (չնչին սրբագրումներով)՝ ըստ *Ագաթանգեղոսի պատմութեան յունական նորայայտ խմբագրութիւնը* (վարք) աշխատ., թարգմ. յունարէն բնագրից՝ Հ. Բարթիկեանի, առաջաբան եւ ծանօթագրութիւններ՝ Ա. Տէր-Ղեւոնդեանի, «Էջմիածին», 1966, է. էջ 28-34, Ը, էջ 46-51, Թ-Ժ, էջ 79-87, տե՛ս էջ 81 – թարգմ.):

4 Va, նոյն տեղում:  
5 Ահա Գրիգորին Կեսարիա ուղեկցող իշխանների ցուցակն ըստ հայկական բնագրի, վեցնտիկեան հրատ., էջ 590-591 (հմմտ. Lagarde, էջ 68-69 [հմմտ. Ագաթանգեղոսի Պատմութիւն Հայոց, էջ 414, § 795 – թարգմ.):

- 1. Անգեղտան իշխանը (Ինգիլէնէ),
- 2. Աղձնիքի իշխանը (Արգանէնէ), որը մեծ բղեշխն է,
- 3. Մարդպետական իշխանութեան իշխանը,
- 4. Ասպետական իշխանութեան թագակապ իշխանը,
- 5. Սպարապետութեան իշխանը, Հայոց աշխարհի գորավարը,
- 6. Կորդուք /var. Կորդովտաց, Կորդուաց – թարգմ.] աշխարհի իշխանը (Գորդիւնէ),
- 7. Ծոփք /Ծոփաց/ աշխարհի իշխանը (Սոֆէնէ),
- 8. Գորգարք /var. Գուգարացոց, Գարգարացոց/ աշխարհի իշխանը (Գորգարէնէ [= Գօգարէնէ]), որը կոչում էր «միս բղեշխ»,
- 9. Ռշտունիք /Ռշտունեաց/ աշխարհի իշխանը,
- 10. Մոկք /Մոկաց/ աշխարհի իշխանը (Մոքսունէնէ),

Ողջ ուղեւորութեան ընթացքում ժողովուրդն ամենաջերմ ընդունելութիւն է ցուցաբերում «Քրիստոսի նահատակ» հայոց լուսաւորչին. քահանաները եւս մասնակցում են համընդհանուր հրճուանքին: Սեբաստիայում տեղի եպիսկոպոսի եւ հոգեւորականութեան խնդրանքով Գրիգորը երկու օր դադար է առնում, ապա շարունակում ճանապարհը դէպի Գամիրքի մայրաքաղաքը<sup>6</sup>:

Գրիգորի եւ նրա շքախմբի՝ Կեսարիա ժամանելու մասին, բացի այդ, յունա-արաբական խմբագրութիւնը մեզ է փոխանցում մինչեւ այժմ անյայտ մանրամասներ: Քաղաքի բոլոր բնակիչները՝ «մեծ թէ փոքր», «կին թէ երեխայ», իշխանի [gouverneur, Արաբ. վարք-ում՝ «քաղաքապետ» – թարգմ.] գլխաւորութեամբ ընդառաջ են գնում սրբին մինչեւ չորրորդ սահմանապիւնը. Գրիգորն իջնում է կառքից եւ նրանց հետ ոտքով քաղաք մտնում: Եկեղեցու մօտ նրան եւ հայոց իշխաններին դիմաւորում են արքեպիսկոպոսը եւ հոգեւորականները. բոլորը միասին նախ մտնում են եկեղեցի՝ աղօթելու, որից յետոյ շքախմբի անդամները հիւրընկալուած են, Գրիգորը եւ իշխաններն՝ արքեպիսկոպոսարանում, միւսները՝ քաղաքի նշանաւոր բնակիչների տներում<sup>7</sup>: Յունարէն խմբագ-

- 11. Սիւնիք /Սիւնեաց/ աշխարհի իշխանը (Սիւնիա),
- 12. Ծաղէք /Ծաղէից/ աշխարհի իշխանը (Ջարդիկէնէ),
- 13. Ուտի /Ուտիացոց, Ուտացոց/ աշխարհի իշխանը (Օտէնէ),
- 14. Ջարեանդ եւ Հեր գաւառի տիրակալ [շահապ] իշխանը,
- 15. Մաղխազի տան իշխանը,
- 16. Արծրունիքի /Արծրունեաց/ իշխանը: – Այս ցուցակում նկատի առնող գործակալութիւնների մասին տե՛ս մեր աշխատանքը՝ "Journal Asiatique", 1966 ["L'ordre des préséances à la cour des Arsacides d'Arménie", էջ 471-497 – թարգմ.):

6 Vg, 126; Va, 114 (Garitte, էջ 84):  
7 Vg, 130-131; Va, 118-119 (Garitte, էջ 85-86):

րութեան այս յոյժ կենդանի շարադրանքից մենք նաեւ իմանում ենք, թէ ինչպիսի ուրախութեամբ են Գրիգորին դիմաւորում իր եւ իր կնոջ մերձակորները, ինչպէս նաեւ՝ իրենց դաստիարակները<sup>8</sup>:

Ղեւոնդիոս արքեպիսկոպոսն այնուհետեւ ժողովի է հրաւիրում բոլոր եպիսկոպոսներին եւ մետրոպոլիտներին, ովքեր գտնուած էին նրա իրաւասութեան ներքոյ՝ «մինչեւ Բիւթանիայի Քաղկեդոն», թուով քսան հոգի<sup>9</sup>: Յուն. վարք-ի գիտական հրատարակիչ ժերար Գարիտն այս հաւաքը նոյնացնում է մէկ այլ ժողովի հետ, որն, ըստ երեւոյթին, գումարուել է Կեսարիայում Անկիւրիայի եւ Նէոկեսարիայի ժողովների միջեւ ընկած ժամանակ<sup>10</sup>: Մենք դեռ կը վերադառնանք այս տեսակէտին, որը գուցէ սպառիչ լուծում է պարունակում թուազրման խնդրի վերաբերեալ:

Եպիսկոպոսները, որ հաւաքուել էին Ղեւոնդիոսի նախագահութեամբ, լսում են վերջինիս հասցէագրուած՝ Տրդատի նամակի ընթերցանութիւնը<sup>11</sup>: Այնուհետեւ արքեպիսկոպոսն անցնում է Գրիգորի եպիս-

8 Vg, 132 (Garitte, էջ 86):  
9 Vg, 133 եւ Va, 121 (նոյն տեղում):  
10 Garitte, էջ 134:

11 Նկատենք յունա-արաբական խմբագրութեան մէջ տեղ գտած՝ Արքեպիսկոպոսի երկար թուարկումը, որը բացակայում է հայ-յունական խմբագրութեան մէջ: Ահաւասիկ՝ ըստ Յուն. վարքի (Garitte, էջ 86-87). Βασιλεὺς Μεγάλης Ἀρμενίας Τρεδάτες ἄμα τῆ ἐμῆ συμβίῳ βασιλίσσῃ Ἀσχηνᾶ, καὶ Χοσοροῖδούκτα ἀδελφῆ αὐτοῦ καὶ πᾶσα Ἀρμενία κυρίῳ ἡμῶν καὶ πρωτοπόμεινι ἀρχιεπισκόπῳ Καπαδοκίας καὶ παντὶ τῷ ὀσίῳ κλήρῳ καὶ τοῖς μεγαλοπρεπεστάτοις ἀρχουσιν καὶ πᾶσι χριστιανοῖς· μετὰ πολλῆς ἀγάπης ταπεινοφροσύνης προσαγορῶν [«Տրդատ թագաւորը Հայոց Մեծաց, իմ կենակից Աշխէն թագուհին, քորն խորովիդույս եւ համայն Հայաստանն առ Կապադովկիայի հովուապետ արքեպիսկոպոսն, ամբողջ սուրբ կղերը, մեծափառ իշխանները եւ համայն քրիստոնէաւորին. մեծ սիրով ու խոնարհամտութեամբ...», տե՛ս Ագաթանգեղոսի պատմութեան յունական նորայայտ խմբագրութիւնը, էջ 82 – թարգմ.):

կոպոսական օժման արարողութեանը, որն, ըստ Ժ. Գարիտի, աղերսուում է բիւզանդական ծիսակարգին<sup>12</sup> եւ որը նկարագրուած ենք գտնում Յուն. վարք-ում հետեւեալ կերպ<sup>13</sup>.

12 Տե՛ս Garitte, էջ 132-135, ով այս արարողութիւնը նմանեցնում է codex Barberini 336-ում նկարագրուած ծեսին, որը թուագրում է Ը.-Թ. դարերով: Հեղինակը նկատում է նաեւ (էջ 133-134), որ «Եպիսկոպոսական օժման հայկական ծեսի նախնական տարբերակն անմիջականօրէն յայտնի չէ... Քանի որ հայոց մօտ ընդհուպ մինչեւ XIV դարը եպիսկոպոսական օժման իրատեսքը վերապահում էր բացառապէս կաթողիկոսին..., սրանով է բացատրում, որ եպիսկոպոսների օժման ծեսը պարունակող արարողական ոչ մի գրաւոր միջոց չի հասել...»:

13 Vg, 145 [բնագրում տեխնիկական վրիպակով՝ 148 – թարգմ.] (Garitte, էջ 91). հմմտ. Va, 133 (նոյն տեղում) [ստորեւ Մ.-Լ. Ծօսնոնի բերած լատիներէն թարգմանութեան արաբերէն բնագրի հատուածը տե՛ս Н. Март. Крещение Армян, Грузин, Абхазов и Аланов святым Григорием. С. Петербург, 1905; հմմտ. նաեւ Ա. Ն. Տէր-Ղեւոնդեան. Ագաթանգեղոսի արաբական նոր խմբագրութիւնը (արաբերէն բնագիր եւ ռուսմատարգման), Երեւան, 1968, Յաւելում: А. С. Жамкочан, Жизнь св. Григория Проветителя Армении по арабской синайской рукописи Sin. 455, Ер.-Москва, 2009, Յաւելում. հատուածի հայերէն թարգմանութիւնը տալիս ենք ըստ՝ Մկրտումիւն Հայոց, Վրաց, Արխազաց եւ Ալանաց ի սրբոյն Գրիգորէ, ի ռուս հրատարակութեան, կատարելոյ ըստ արաբերէն օրինակի յուսուցչապէս Նիկողայոսէ Ման. Թարգմանեաց ի հայ Միաբան Ա. Էջմիածնի Յուսիկ արքեպիսկոպոս. Վաղարշապատ, 1911, էջ 62-63 – թարգմ.): "Tum convenerunt episcopi cum sancto patriarcho Leontio, et in sanctam ecclesiam universalem intraverunt beatumque ad altare adduxerunt; sancta Evangelia aperuerunt eaque super martyrem Gregorium confessorum explicuerunt. Tum beatus Leontius omnesque episcopi ei manus imposuerunt, orationemque super eum recitaverunt quae omnibus necessaria est qui ad principatum accedere volunt, et induerunt eum sticharium (sticharia). Et clamaverunt omnes homines: "Dignus, dignus, dignus" liturgiamque peregerunt. Locum autem in quo Evangelia aperuerant diacono dederunt qui illa die Evangelium legere debebat; ita autem (scriptum) erat in loco illo qui legi debebat: "Ego sum pastor bonus qui trado animam meam pro grege meo"; et quae secuuntur. Et post finem

Συνελθόντων δὲ τῶν ἁγιοτάτων ἐπισκόπων ἅμα τῷ ἁγιοτάτῳ πατριάρχῃ Λεοντίῳ καὶ εἰσελθόντων εἰς τὴν ἁγίαν ἐκκλησίαν ἀνήγαγον τὸν ἅγιον ἐπὶ τὸ βῆμα, καὶ τὰ ἅγια εὐαγγέλια ἀνοίξαντες ἐπέθηκαν ἐπάνω τοῦ μάρτυρος καὶ ὁμολογητοῦ Γρηγορίου. Ἐπέθηκάν δὲ ἅπαντες τὰς ἁγίας αὐτῶν χεῖρας εὐξάμενοι ἐπ’ αὐτῷ τὴν εἰθυσίαν εὐχὴν καὶ περιτεθηκότες τὸ μαφόριον λέγοντες· «Ἄξιος ἄξιος ἄξιος»· πεποιηκότες δὲ τὴν λειτουργίαν καὶ τοῦ ἁγίου εὐαγγελίου ἀναγινωσκομένου· «Ἐγὼ εἶμι ὁ ποιμὴν ὁ καλός», καὶ τὰ ἐξῆς, πάντες δὲ μετὰ τὸν κανόνα ἠσπάζοντο τὸν μάρτυρα.

«Սրբազնագոյն եպիսկոպոսները սրբազնագոյն հայրապետ Ղեւոնդիոսի հետ հաւաքուեցին, մտան սուրբ եկեղեցին, սրբին բեմ բարձրացրին եւ բացելով սուրբ Աւետարանը դրին վկայ եւ խոստովանող Գրիգորի վրայ, նրանք բոլորն իրենց սուրբ ձեռքերը դրին նրա վրայ եւ կարդացին ընդունուած աղօթքը, ապա նրա ուսին դցեցին եմփորոնը եւ ասացին. «Արժանի՛, արժանի՛, արժանի՛»: Նրանք պատարագեցին, ընթերցելով սուրբ Աւետարանի ընթերցուածը. «Ես եմ հովիւր բարի» եւ շա-

liturgiae omnes homines sanctum metropolitam magnae Armeniae Gregorium salutaverunt" [«Եպիսկոպոսք հանդերձ սուրբ պատրիարքան Ղեւոնդիոսի ժողովեցան եւ գնացին ի սուրբ եւ յաւագ եկեղեցին (соборная церковь), ածին գերանելին սո սեղանն, բացին գուրք Աւետարանն եւ եղին ի վերայ նահատակին Գրիգորի խոստովանողի: Եւ երանելին Ղեւոնդիոս եւ ամենայն եպիսկոպոսուք եղին ձեռս ի վերայ նորա. ընթերցան ի վերայ նորա աղօթս, որք պէտք են վասն իւրաքանչիւրոյ, որ ցանկալ հասանել առաջնորդութեան, եւ զգեցուցին նմա զշապիկ [ժամաշապիկ – *смухара*]: Ամենայն ժողովուրդն գոչէր. «Արժանի է, արժանի է, արժանի է»: Եւ կատարեցին գպատարագն: Եւ ետուն զբացեալ տեղին ի Գիրս չորից Աւետարանաց ցարկաւագ, որում անկանէր յայն օր ընթեռնույ զԱւետարան: Եւ այսպէս էր տեղին, զոր ընթեռնույ հարկ էր. «Ես եմ հովիւ բարի, որ դնեմ զանձն Իմ ի վերայ հօտի Իմոյ /Յովհ. Ժ 14, 15/» եւն: Յետ ապրտման ամենայն ժողովուրդն ողջունեաց գուրքն՝ որպէս մետրապօլիտ մեծին Հայաստանի /հիւս Մեծ Հայքի/ Գրիգոր»]:

րունահղութիւնը: Սաղմոսերգութիւնից յետոյ բոլորը ողջունում էին վկային»:

Կեսարիայից մեկնելուց առաջ Գրիգոր Լուսաւորիչն իր իսկ խնդրանքով ստանում է սուրբ Կարապետի եւ վերջերս նահատակուած սուրբ վկայ Աթանազիւսի<sup>14</sup> նշխարները: Եթէ հաւատանք Զենոբ Գլախին, Ղեւոնդիոսն այս թանկագին մասունքները զիջել է հայ նախարարների ճնշման տակ եւ ծանրագին սակարկութեան գնով՝ որպէս յատուցում վերցնելով տասներկու հազար դահեկան<sup>15</sup>: Չնայած Զենոբ Գլախը հակում ունի աղաւաղելու պատմական եղելութիւնների ճշգրտութիւնը, սակայն ամենեւին անհաւանական չի թւում, որ նման բախումներ ծագած լինէին Կեսարիայի յոյների եւ հայ խոստարարոյ իշխանների միջեւ: Գրիգորը Կեսարիայից վերադառնում է՝ բերելով Ղեւոնդիոսի երկու նամակները, որոնցից մէկը Տրդատ արքայի նամակի պատասխանն է, իսկ միւսը՝ ժողովական թուղթ (συνοδικὰ γράμματα), որով Սեբաստիայի եպիսկոպոս Պետրոսին յանձնարարում էր Գրիգորին նստեցնել եպիսկոպոսական աթոռին, ըստ սուրբ կանոնների (κατὰ τοὺς ἁγίους κανόνας)<sup>16</sup>:

Կեսարիայում Գրիգորի ձեռնադրման վաւերականութիւնը կասկածի տակ է առնուել Գուտշմիդի կողմից: Ըստ նրա՝ ուղեւորութեան պերճաշուք հանդիսաւորու-

14 Ս. Աթանագիւսի հետ կապում՝ տե՛ս ստորեւ:  
 15 Զենոբ Գլախ, Պատմութիւն Տարօնոյ, հրատ. Վեներտիկ [1832], էջ 23-24 [հմմտ. «Մատենագիրք Հայոց», հտ. Ե. Է դար, Անթիլիաս, 2005, էջ 1007-1008 – թարգմ.]: Անգեղոսան իշխանն անգամ սպառնացել է հրդեհել Կեսարիա քաղաքը: Այս նոյն ամսագրոյն է արտացոլում տէր Իսրայէլի Յայամաւորքը, P. O. XV, էջ 315 եւ յետոյ [հմմտ. Համաքարքատ Յայամաւորք, Է, Յուլիս, Վաղարշապատ – Ս. Էջմածին, 2011, Յուլիս ԺԷ, Հրոտից ԺԱ, էջ 184-186 – թարգմ.]:  
 16 Vg, 153; Va, 141 (Garitte, էջ 95): Պետրոսին ուղղում Ղեւոնդիոսի նամակը, բնականաբար, բացակայում է հայ-յունական խմբագրութեան մէջ, որտեղ որեւէ յիշատակութիւն չկայ ո՛չ այս անձնատրութեան, ո՛չ նրա դերի մասին:

թիւնը չի համապատասխանում ո՛չ ժամանակաշրջանին, ո՛չ էլ իրադրութեանը. այստեղ աւելի շուտ արհեստականօրէն վերակազմուած է հետագայում կայացած օծումների պատկերը<sup>17</sup>: Ազաթանգեղոսի գրքի հանդէպ թերահաւատ քննադատութիւնը, որն արդէն Գեղեցիկը համարում էր չհիմնաւորուած<sup>18</sup>, այսօր այլեւս չի պաշտպանում յունարէն եւ արաբերէն Վարքերի վերին աստիճանի հանգամանալից պատումների առկայութեան պարագայում, որոնք բացի, այսպէս ասած, կեանքից անմիջականօրէն վերցուած կոնկրետ մանրամասներից, ներկայացնում են նաեւ այնպիսի ոչ վիպագրական կերպարներ, ինչպիսիք են Արտաւազդ Մամիկոնեանը եւ Պետրոս Սեբաստացին. վերջինս Գրիգորի համար լրացնում է Ղեւոնդիոսի առաջին կարգի դերակատարութիւնը:

Վերադարձի ճանապարհին եւս Սեբաստիայում արուած մի կանգառ, այս անգամ՝ վեցօրեայ (Յուն. վարք-ում ասուում է, որ հայերը տեղադրել էին իրենց վրանները քաղաքի մատոյցներում, Տրիոդա կոչուող վայրում<sup>19</sup>), մեծ օգուտ է բերում նորածնունդ Հայոց եկեղեցուն, քանի որ

Գրիգորին ընձեռուում է քաղաքի բազում վանականների եւ քահանաների համագործակցութիւնը, որոնք միանում են շքախմբին: Նոյնը եւ՝ Պետրոս եպիսկոպոսի պարագայում: Նշանակալի է այն փաստը, որ Գրիգորի գահակալման արարողութիւնը չի կատարուում այն իրականացնող եպիսկոպոսի նստավայրում:

Սեբաստիայից դուրս գալով՝ Հայոց շքախումբը շեղուում է գնալու ժամանակ ընտրած երթուղուց եւ ուղղութիւն վերցնում դէպի հարաւ՝ Տարօն գաւառը: Ճանապարհին Լուսաւորիչը մեծ բաւարարուածութեամբ տեսնում է, որ եկեղեցիներն արդէն կառուցուել են այն վայրերում, որտեղ նա նախապէս խաչեր էր կանգնեցրել<sup>20</sup>: Սակայն երբ մօտենում են Եփրատի ափերին՝ Աշտիշատ հասնելու համար, տեղի է ունենում նախախնամութեան միջամտութիւնը. արքայական կառքին լծուած ջորիները, որում Գրիգորի հետ գտնուում էին նաեւ սուրբ վկաների մասունքները, հրաժարում են՝ առաջ գնալ՝ այդպիսով ցուցանելով այն վայրը, որտեղ պէտք է հանգիստ առնէին ս. Աթանազիւսը եւ ս. Յովհաննէս Մկրտիչը:

Դժբախտաբար, Աշտիշատ մնում էր հայկական հեթանոսութեան առաւել ծաղկուն օջախներից մէկը եւ, ըստ ժողովրդական ստուգաբանութեան, որը փոխանցում է Ազաթանգեղոսը, այն այդպէս էր անուանում, քանզի Մեծ Հայքի արքաների «զոհաբերութեան վայրն» էր<sup>21</sup>: Ըստ երեւոյթին, կռապաշտական սրբարանները

17 A. von Gutschmid, Agathangelos, – "Kleine Schriften", III, Leipzig, 1892 [ստաւիս հրատ.՝ Leipzig, 1877, հայերէն թարգմ. տե՛ս «Բազմավէպ», 1878-1879 – թարգմ.], էջ 416 եւ յետոյ:  
 18 Տե՛ս H. Gelzer, Die Anfänge der armenischen Kirche, Leipzig, 1895, էջ 171 եւ յետոյ, ով Գուտշմիդի բերած պատճառաբանութիւնները գտնում է ոչ պակաս, քան "durchschlagend"՝ ընդգծելով Գրիգորին ուղեկցող նախարարների անուանական ցուցակի պատմական արժէքը: Մեր ուսումնասիրութիւնը տե՛ս "Journal Asiatique"-ում, 1966 [էջ 471-497]:  
 19 Vg, 152, Va, 140 (Garitte, էջ 94): Արաբական տարբերակում նշում է՝ «եռակի, եռանկիւնի անուանում» տեղ, որը Ն. Մառը մեկնաբանել է իբրեւ մի վայր, որտեղ «Երրորդութիւն» անունը կրող եկեղեցի է եղել (H. Mapp, Крещеніе Армян, Грузин, Абхазов и Аланов святым Григорием, էջ 211, ճգր. 6): Տրիոդա վայրը ներկայումս տեղորոշելու դժուարութեան մասին տե՛ս Garitte, էջ 238:

20 Vg, 154; Va, 142 (Garitte, էջ 95): Ըստ արաբական տարբերակի տեղեկութեան՝ Գրիգորն այս եկեղեցիներում սեղաններ է կանգնեցնում, որոնք օծում է Սեբաստիայի եպիսկոպոսը:  
 21 «Յաշտիշատ», բառացիօրէն՝ «զոհաւատ» (πολύθυτος): Այս ստուգաբանութիւնը կասկածի տակ է առել Հիւբշմանը (H. Hübschmann, Armenische Grammatik, I, Leipzig, 1897, էջ 212), որը, ելնելով «Աշտաշատ» ձեւից (եւս վկայում), ենթադրում է աւելի հին \*Աշտեշատ կամ Աշտե, որը մի անձնանուն համապատասխանում է եղել:

խմբուած են եղել Քարքէ լեռան վրայ, որը վեր էր խոյանում Եփրատի ափին: Այստեղ էր գտնուում Վահագն Վիշապաքաղ աստծոյ տաճարը, որին կցուած էին երկու կանացի աստուածութիւններ՝ «ոսկեմայր» կոչուած Անահիտը, ում ոսկէ արձանը երկրպագուում էր Երէզում, եւ Աստղիկը, ով «Վահագնի տարփածու [concubine]» էր կոչուում եւ նոյնացուում էր յունական Ափրոդիտէին: Սակայն դժուար է որոշակի կարծիք յայտնել, թէ արդեօք այս երկու աստուածուհիներին իւրաքանչիւրն Աշտիշատում ունէր իր սեփական տաճարը, ինչպէս ենթադրել է տալիս Հայերէն բնագիրը, թէ երկուսն էլ ընդամէնը առանձին զոհասեղան ունէին Վահագնի տաճարի ներսում, ինչպէս ցուցանում են յունարէն բնագրում գործածուած եզրոյթները<sup>22</sup>: Ինչեւէ, կասկածից վեր է, որ ռազմի աստուած Վահագնը իր տաճարով («Վահեփանեան մեհեան») առաջնային տեղ էր զբաղեցնում Տարօնի կենտրոնի կրօնական կեանքում:

Գրիգորն այս սրբարանների կործանմանն է ուղղում նախարարների եւ զօրականների աւերիչ եռանդը, որոնք պատրաստուում էին մատուռներ կանգնեցնել թանկագին մասունքների համար: Ինչպէս սրբագործման արարողութեան՝ նկարագրուած նախորդ դէպքերում, այստեղ եւս հարկաւոր էր նախ յաղթահարել դեւերի յարուցած խոչընդոտները: Այս անգամ յաղթանակը ձեռք է բերուում Գրիգորի պարզած խաչի շնորհիւ, որի առաջացրած փոթորիկը սրբում-տանում է բոլոր մեհեաններն ու զոհասեղանները: Հրաշագործութիւն, որ արժանանում է Սեբաստիայի եպիսկոպոսի հիացմունքին<sup>23</sup>:

Գրիգորի գահակալումը, որը յիշատակուած է միայն յունա-արաբական խմբա-

22 Հրատ. Lagarde, էջ 71. τοῦτο τὸ ἱερὸν... τρεῖς βωμοὺς ἐν ἑαυτῷ ἔχων.

23 Vg, 158; Va, 146 (Garitte, էջ 96):

գրութեան մէջ, ըստ ամենայնի, Աշտիշատում կանգ առնելու ակնառու պատճառն էր<sup>24</sup>: Գրիգորը հիմնադրում է նոր եկեղեցին այն նոյն տեղում, որտեղ կանգնած էին կուռքերի մեհեանները. սա պէտք է որ ժամանակագրորէն առաջին հայկական եկեղեցին լինի<sup>25</sup>: Դարձեալ այստեղ է, որ Գրիգորն առաջին մկրտութիւններն է իրականացնում՝ սկսելով իր շքախմբի իշխաններից, վերջիններին իսկ խնդրանքով. ապա հերթը հասնում է գաւառի՝ արդէն դարձի եկած բնակիչներին, որոնք հաւաքուել էին Քարքէ լեռան վրայ<sup>26</sup>: Աշտիշատում մկրտուածների թիւը՝ իննսուն հազար, իհարկէ, չափազանցուած է Ազաթանգեղոսի մօտ: Որոշ հիմքեր կան ենթադրելու, որ չնայած Հայաստանի հարաւում քրիստոնէութեան բաւական վաղ մուտքին՝ իր կուռքերին մոլեռանդորէն կապուած այդ տարածքում Գրիգորի առաքելութիւնը հանդիպեց աւելի շատ թշնամանքի, քան համակրանքի, եւ որ ազնուականութեան ու ռամիկ ժողովրդի մկրտութիւնը հեռու էր ինքնաբուխ լինելուց: Նշանակուում է, արդեօք, որ պէտք է հաւատ ընծայել Զենոբ Գլակին, երբ վերջինս մանրամասնորէն պատմում է Կեսարիայից վերադարձին Աշտիշատի շրջակայքի քրմերի (որոնց գլխաւորում էր Հաշտեանքի իշխանին ազգակից եւ ուժեղ անհատականութիւն հանդիսացող քրմապետ Արձանը) եւ Գրիգորի ուղեկից իշխանների (յատկապէս՝ Անգեղտան ու Սիւնիքի իշխանների) միջեւ կայացած վիպերգական մարտի մասին՝ մեզ համար խորհրդաւոր Գիսանէ եւ Դեմետր կուռքերի

24 Vg, 159; Va, 146 (Garitte, էջ 97):

25 Տե՛ս Փատտոս Բուզանդ. Պատմութիւն Հայոց, III, Գ [հմմտ. «Մատենագիրք Հայոց», հտ. Ա, Ե դար, Անթիլիաս, 2003, էջ 279 – թարգմ.]. «ի մեծն յառաջին ի մայրն եկեղեցեացն Հայոց, որ էր յերկրին Տարսուոն»:

26 Այս տեղեկութիւնից ստացում է, որ Գրիգորի ուղեկից իշխանները եւ Աշտիշատի տարածքի բնակիչներն աւելի վաղ են մկրտուելու արտօնութիւնն արքայից ստացել:

համար, որոնք, թուում է, թէ մի տեղական պաշտամունքի առարկայ են եղել Կուառ կոչուող վայրում, Քարքէ լեռան վրայ<sup>27</sup>: Այս պատումում նշենք նաեւ Մէտակէսի՝ Աշտիշատի քրմապետի միջամտութիւնը, ինչպէս եւ Հաշտեանքի իշխանի երկդիմի դերը, որն ի վերջոյ անցաւ ապստամբների կողմը, ապա սպանուեց Սիւնեաց իշխանի ձեռքով: Չնայած Զենոբի երկը, որի հիմնական նպատակը Սուրբ Կարապետ եկեղեցու եւ վանքի՝ Կեսարիայից վերադարձած Գրիգոր Լուսաւորչի կողմից հիմնադրուելու շեշտումն է, կասկած հարուցելու աստիճան ծփում է հրաշքների ու հրաշագործութիւնների ծովում, մենք մեզ իրաւունք չենք վերապահում՝ ամբողջութեամբ ժխտելու այնտեղ նկարագրուած դէմքերի ու դէպքերի պատմականութիւնը<sup>28</sup>. յամենայն դէպս, չենք կարող չընդունել Զենոբի վկայութիւնը քրմական դասի կատաղի դիմադրութեան վերաբերեալ. ժողովրդի եւ որոշ աստրապների պաշտպանութեամբ հզօրացած՝ այդ դասը պայքարում էր (եւ ո՛չ միայն Տարօնում) աշխարհիկ եւ հոգեւոր բարձրագոյն իշխանութեան միացեալ ջանքերի

27 Զենոբ Գլակ, հրատ. Վեմետիկ, էջ 15 եւ յետոյ [հմմտ. «Մատենագիրք Հայոց», հտ. Ե, էջ 1008-1009 եւ յետոյ – թարգմ.]: Բաւական զարմանալի է, որ Աս Գիսանէ եւ Դեմետր կուռքերին Աշում է որպէս Հնդկաստանից բերուած: Գեյցերը գտնում է, որ այս կուռքերը, որ յիշատակուած չեն Ազաթանգեղոսի մօտ, ամբողջությամբ հեղինակի երեսակայութեան արդիւնք են: Սակայն Վեբերի կարծիքով (S. Weber, Die Katholische Kirche in Armenien. Ihre Begründung und Entwicklung vor der Trennung, Friburg am Brisgau, 1903, էջ 41)՝ դրանց անունների բացակայութիւնը Ազաթանգեղոսի մօտ պայմանաւորուած է այս աստուածութիւնների պաշտամունքի տեղական եւ ոչ պաշտօնական բնոյթով:

28 Գեյցերը (Աշ. աշխ.) շատ խիստ քննադատութեան է ենթարկել Զենոբի երկը, համարելով այն բացարձակապէս առասպելական եւ պատմական արժեքից զուրկ: Ինչ վերաբերում է Սուրբ Կարապետ վանքին, որը պատկանում էր Մամիկոնեան տոհմին, ի՛նչ յօտք, այն Գրիգորից շատ աւելի ուշ է հիմնադրուել:

դէմ, քանի որ այդ ջանքերի նպատակը գոյութիւն ունեցող համակարգի վերացումն էր, որի հետ կը վերանար նաեւ այդ հզօր ու արտօնեալ խաւը: Նոր կրօնի հանդէպ դիմադրութեան այլ արձագանքներ են յայտնի՝ բռնութեան առաւել կամ պակաս դրսեւորումներով (նայած՝ գաւառների), որոնց արդիւնքում դեռ երկար ժամանակ երկրում պահպանուում են հեթանոսութեան վտանգաւոր օջախներ: Բայց, հակառակ այս ամէնին, քրիստոնէութեան տարածումն արդէն թափ էր առել, եւ ոմանց հրաժարումն ընդհանուր առմամբ նուազ կշիռ ունէր՝ Տրդատ արքայի աննկուն վճռականութեան եւ Գրիգորի առաքելական ջերմեռանդութեան համեմատութեամբ:

Վերադառնանք Ազաթանգեղոսի պատմին: Սրբի վերադարձի լուրն առնելով՝ Հայոց արքան Աշխէն թագուհու եւ Խոսրովի դուստր արքայադստեր ուղեկցութեամբ ելնում է նրան ընդառաջ: Հանդիպումը տեղի է ունենում Բագաւանում, որը գտնուում է Արեւելեան Եփրատի ափին (Արածանի, Arzaniyas)՝ Նպատ լեռան ստորոտին: Հակուած ենք ենթադրելու, որ Գրիգորն ընտրել էր այդ վայրը արքայական մկրտութեան համար ոչ միայն գետի մօտ լինելու պատճառով, այլեւ քանզի ցանկանում էր իւրայատուկ կերպով նշել քրիստոնէական հաւատի յաղթանակը հեթանոսական կեղծ աստուածների նկատմամբ, որոնց պաշտամունքին էր յատկապէս նուիրուած Բագաւանը («աստուածների աւան»)՝<sup>29</sup>:

Յունա-արաբական խմբագրութիւնից պարզ է դառնում, որ արքայական շքախմբին հանդիպելուց անմիջապէս յետոյ Գրիգորը Դեւոնդիտի նամակը յանձնում է Տրդատին, եւ վերջինս, Լիկինիոսի արքու-

29 Ըստ Vg, 159 եւ Va, 147 (Garitte, էջ 97)՝ Հայոց արքայի ընտանիքի հետ ներկայ էին նաեւ հարեան Վրաց, Լագերի եւ Աղուանքի վասալ թագաւորները. այս անձանց տեսնում ենք նաեւ բուն մկրտութեան արարողութեան նկարագրութեան ժամանակ:

նիքում անցկացրած տարիների ընթացքում յունարէնին լաւ տիրապետած լինելով, այն յանպատրաստից թարգմանում է հայերէն<sup>30</sup>: Հանգամանք, որ խօսում է Արշակունու «արեւմտականացած» լինելու օգտին: Սակայն, մեր կարծիքով, նամակն աւելի շուտ յունարէնից թարգմանուել է պարթեւերէն, քան հայերէն, որովհետեւ վերջինս այդ ժամանակ, ամենայն հաւանականութեամբ, դեռ գործածութեան համար ընդունուած էր Արշակունիների արքունիքում:

Մրանից յետոյ Տրդատն ու Գրիգորը հրաժեշտ են տալիս իր յանձնարարութիւնը կատարած Պետրոս Սեբաստացուն<sup>31</sup>:

Մկրտութեան պատրաստող նորագարձներին՝ արքայական ընտանիքին, նախարարներին եւ ժողովրդին, Գրիգորը երեսնօրեայ նախապատրաստական պահք է պարտադրում: Երեսուներորդ օրուայ աւարտին նրանց առաջնորդում է Արածանիի ավիր՝ Բագաւանի մերձակայքում: Առաջին հերթին մկրտում են արքան, թագուհին եւ արքայազուստը [Խոսրովի դուստր], ապա, ըստ յունա-արաբական խմբագրութեան՝ Վրաց, Լազերի եւ Աղուանից արքաները<sup>32</sup>, այնուհետեւ նախարարներն ու նրանց կանայք, վերջիններս՝ տղամարդկանցից առանձին, վարագոյրի յետեւում շղարշուած<sup>33</sup>: Արարողութեան ընթացքում բոլորին տեսանելի հրաշք է տեղի ունենում. գետի մէջտեղում հրէ սիւն է յայտնուում, որի գագաթին շողշողում է խաչը:

30 Vg. 159 (Garitte, էջ 97). πολλήν γὰρ πείραν ἐσχίκει ἑλληνικῆς τε καὶ ῥωμαϊκῆς παιδείας, ἐν μουσείοις γενόμενος ἡνίκα ἦν παρὰ Λικινίῳ τῷ Ῥωμαίων στρατηγῷ καὶ ὕρατῳ· καὶ διερμήνευεν τὴν σταλεῖσαν ἐπιστολὴν Λεοντίου ἐκ τῆς ἑλληνίδος φωνῆς εἰς τὴν τῶν Ἀρμενίων γλῶτταν: Հմմտ. Va, 147 (նոյն տեղում).

31 Vg, 160; Va, 152 (նոյն տեղում, էջ 99):

32 Vg, 163, Va, 153 (նոյն տեղում):

33 Այս մանրամասնը հաղորդում է միայն Յուն. վարքը, 165 (նոյն տեղում):

Հայոց մկրտութիւնը, որ կատարուում է ջուրը մտնելու սկզբունքով եւ ակնյայտօրէն ներշնչուած է Յորդանանի ջրերում Յիսուսի մկրտութիւնից, տեւում է եօթ օր: Ըստ հայ-յունական խմբագրութեան՝ մկրտուածների թիւը հասնում է չորս միլիոնի, իսկ ըստ յունա-արաբականի՝ երեք հարիւր եօթանասուն հազարի, սակայն այս թիւն էլ բաւական բարձր է իրականից<sup>34</sup>: Բագաւանում անցկացրած օրերին Գրիգորը հիմնարկում է եկեղեցի՝ նուիրուած ս. Յովհաննէս Մկրտչին եւ ս. Աթանազիւսին, հաւանաբար՝ նոյն տեղում, որտեղ կանգնած էր Վանատուր աստծոյ մեհեանը, եւ հաստատում է սրբերի ամենամեայ յիշատակի օրը, որը պիտի փոխարինէր Հեթանոս աստծոյ տօնին, որին ամէն տարի Ամանորի ժամանակ հսկայական թուով ժողովուրդ էր հաւաքուում<sup>35</sup>:

Սուրբ Գրիգորի ձեռնադրութիւնը Կեսարիայում եւ Տրդատի մկրտութիւնը Բագաւանում կազմում են առ քրիստոնէութիւն հայերի դարձի երկու հիմնական փուլերը: Այս մեծանշանակ իրադարձութիւնը պէտք է որ յոյժ շրջադարձային լինէր հայ ժողովրդի պատմութեան մէջ, որն այդ պահից սկսեց վճռականօրէն ընթանալ Արեւմուտքի եւ Հռոմէական կայսրութեան ուղեգծով՝ առանց խզելու, սակայն, կապը հին պարթեւական անցեալի հետ:

Մինչեւ վերջին ժամանակներս համարուում էր, որ Հայաստանի դարձը տեղի է ունեցել Կոստանդիանոս կայսեր կողմից քրիստոնէութեան պաշտօնական ճանա-

34 Vg, 164, Va, 152 (նոյն տեղում):

35 «Հիրրնկալ» աստուած Վանատուրի մասին (ներկայումս՝ ոմանց վրիպմամբ յայտնի Ամանոր անուան տակ), որի պաշտամունքը Բագաւանում հաստատուել էր Վաղարշակ արքայի կողմից՝ ի յիշատակ իր եղբայր, քրմապետ Մաթանի (Մովսէս Խորենացին (Բ, 66) յղում է անոս Բարդաւանին), տե՛ս Մ. Էմին, Վէպը հնոյն Հայաստանի. Քննութիւն, Մոսկուա, 1850, էջ 23-24, եւ յատկապէս՝ H. Gelzer, Zur armenischen Götterlehre, Leipzig, 1896, էջ 132-134:

չումից (313 թ.) առաջ: Այս է ցուցանում, յամենայն դէպս, հայ-յունական խմբագրութիւնը, որտեղ պատճառահետեւանքային կապ է հաստատուած Կոստանդիանոսի դարձի եւ Տրդատի՝ նրան այցելելու որոշման միջեւ<sup>36</sup>: Սակայն այս հարցում գլխաւոր վկայութիւնը, թերեւս, Սոզոմէնոսինն է, որն իր Եկեղեցական պատմութեան մէջ, խօսելով Վրաց դարձի մասին, նշում է, որ հայերն արդէն քրիստոնէութիւն էին ընդունել «πάλιν πρότερον», այսինքն՝ Կոստանդիանոսից առաջ<sup>37</sup>: Առաջին հայեացքից, այս աւանդութիւնն այնքանով է անխոցելի թւում, որքանով հայկական աղբիւրների հաղորդած ժամանակագրական տուեալները, անկախ մասնակի տարաձայնութիւններից, կարծես թէ, հաստատում են դա:

Առաջին հերթին անխուսափելիօրէն հանդիպում ենք Մովսէս Խորենացուն (Բ, 91), որի հաղորդմամբ Գրիգորը Թագէոս առաքեալի գահին է բարձրացել Տրդատի 17-րդ տարում եւ աշխարհից հեռացել նոյն Տրդատի թագաւորութեան 40-րդ տարում՝ 30-ամեայ տիրակալութիւնից յետոյ: Այս թուերի ժամանակագրական համադրութեամբ՝ Գրիգորի ձեռնադրման տարեթիւը ստացւում է 299/300 թուականը. բայց մենք նշանակալիօրէն տարբեր արդիւնք կը ստանանք, եթէ Տրդատի գահակալութեան սկիզբը հաշուենք Դիոկղետիանոսի երրորդ տարուց՝ ըստ նոյն պատմիչի մէկ այլ (բաւական յայտնի) թուագրութեան (Բ, 77), այն է՝ 303/304: Գրիգորի ձեռնադրման

36 Ագաթանգեղոս, Վեներիկի հրատ., էջ 643 [Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, էջ 456-459]; Lagarde-ի հրատ., էջ 35:

37 Sozomène, Hist., II, 8, P. G., LXVII, սիւս. 953-956. Ἀρμενίους δὲ πάλιν πρότερον ἐπισθόμεν κριστιανίται. Λέγεται γὰρ Τιριδάτην τὸν ἡγούμενον τούτου τοῦ ἔθνους, ἐκ τινος παραδόξου θεουσημείας περὶ τὸν αὐτοῦ οἶκον, ἅμα ἀρχομένους ὑφ' ἐνὶ κτηρύμα, προστάξαι ὁμοίως θρησκεύειν: Սոզոմէնոսը միակ եկեղեցական հեղինակն է, որ Հայոց դարձն աներկբայօրէն վերագրում է Տրդատին:

թուականի հաշուարկումը Տրդատի գահակալութեան 17-րդ տարով հանդիպում է աւելի ուշ շրջանի հայ պատմիչների մօտ, ինչպէս՝ Ստեփանոս Տարօնացու (գլ. Բ, 1. H. Gelzer եւ A. Burckhardt /Leipzig, 1907/, էջ 44 [Ստեփանոսի Տարօնացոյ Աստղական Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 63]) եւ Յովհաննէս Դրասխանակերտցու (գլ. Ը. A. Saint-Martin /Paris, 1841/, էջ 32 [Յովհաննէս կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 39; «Մատենագիրք Հայոց», Հտ. ԺԱ, Անթիլիաս, 2010, էջ 379]), ինչը չի խանգարում այս երկուսից առաջինին՝ Հայոց թուականութեան սկիզբը (Ք. յ. 553) դնելու Գրիգորի վարդապետութիւնից 252 տարի անց, որի արդիւնքում ստացւում է 301 թիւը [բնագրում տեխնիկական վրիպակով՝ 304 – թարգմ.]: Ըստ Սամուէլ Անեցու հաշուարկի (Tables chronologiques, հրատ. J. Zohrab եւ A. Maio /Milan, 1818/, էջ 41. Հմմտ. M. F. Brosset, Collection des historiens arméniens, II, Saint-Petersbourg, 1876, էջ 367 [Սամուէլի քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 63])՝ Տրդատի մկրտութիւնը «Կեսարիայից նոր վերադարձած» Գրիգորի ձեռքով (դնելով դա Դիոկղետիանոսի 17-րդ տարում) ընկնում էր Ք. յ. 306 թուականին:

Բացի այդ, Diegesis-ում (§ 1. Հրատ. G. Garitte-ի [La Narratio des rebus armeniae, Édition critique et commentaire par G. Garitte, Louvain, 1952], էջ 27) Նիկիայի ժողովը (325 թ.) թուագրուած է «Վիրապից Գրիգորի ելքի» 20-րդ տարով. ինչպէս երեւում է, հեղինակն այս իրադարձութիւնը փաստացի նոյնացնում է օժման հետ: Այս նոյն սինքրոնիզմը տրուած է նաեւ Յովհան Օձնեցուն վերագրուած Սալու ժողովոց-ի [Histoire des conciles arméniens] մէջ (Գիրք թղթոց, էջ 221 [Յովհան կաթողիկոս Օձնեցի, Սալու ժողովոցն, որ եղեմ ի Հայս, Գիտաքննական բնագիրը Ա. Յակոբեանի, – «Հանդէս ամսօրեայ», ՃԻԳ տարի, Վիեննա-եր.,

2009, էջ 93]) եւ այս նոյն բովանդակութեամբ մէկ այլ անտիպ ժողովածոյում (Bibliothèque Nationale-ի ձեռ. 130 arm.): Այս երեք աղբիւրներէց, որ, անկասկած, սերում են միեւնոյն աւանդոյթից, որպէս Գրիգորի օծման տարի է ստացուած 305 թուականը:

Այս բազմատեսակ տուեալներին կ'աւելացնենք մի արձանագրութիւն՝ փորագրուած Բագրատունի արքաների Հին մայրաքաղաք Անիի (ներկայումս՝ Գամախ) մայր տաճարի արտաքին պատին, որը յիշատակում է այս տաճարի կառուցումը «Հայոց եւ Վրաց շահանշահ» Գագիկի տիկնոջ՝ Կատրանիդէ թագուհու խնամատարութեամբ, քրիստոնէական թուականութեան 1001 թ.<sup>38</sup>: Կ. Բասմաջեանն այս բնագրում տարբերել է երկու առանձին հատուած. երկրորդը (որ սկսում է 13-րդ տողի մէջտեղից) աւելի ուշ է աւելացուած՝ Սարգիս կաթողիկոսի հրամանով, որտեղ կարգադրուած է ամէն տարի պատարագ մատուցել թագուհու յիշատակին, եւ դա՝ «Ազամից յետոյ 6433-ին, Աստուծոյ Բանի մարմնանալոյ 1012-ին, Հայոց դարձի 711-ին»: Եթէ ելնենք այս ժամանակագրական համադրումից, Հայոց դարձը կ'ընկնի 301 թուականին<sup>39</sup>:

38 Անիի մայր տաճարի արձանագրութիւնը նախ հրատարակուել է Մ. Բրոսսէի կողմից՝ ըստ Հայր Ալիշանի ունեցած մի ընդօրինակութեան, *Les ruines d'Ani*-ում (Ս. Պետերբուրգ, 1860-1861)՝ ընթերցումների սխալներով, այնուհետեւ Կ. Բասմաջեանի կողմից՝ "Revue d'Orient Chrétien"-ում, XXII (1920-1921), էջ 351-353: Մ'ենք անոր իմացանք, որ Յովսէփ Օրբէլին գետնից է պնդիր *Դիվան հայ վիմագրութեան* պրակ 1-ում՝ *Անի քաղաք* (յետմահու հրատարակութիւն, Երեւան [1966], էջ 35, № 101):

39 Ահաւասիկ արձանագրութեան երկրորդ մասի բնագիրը՝ ըստ Բասմաջեանի թարգմանութեան, 62. տեղում, էջ 353 [ստորեւ բերում ենք միայն գիտական հրատարակութեան բնագիրը (ոչ մեծ սրբագրումներով)՝ *Դիվան հայ վիմագրութեան*, պր. I, *Անի քաղաք*, Կազմեց Յ. Ա. Օրբէլի, Եր., 1966, էջ 35-ից - *Թարգմ.*], «Հրամալեալ եմ ես՝ Տէր Սարգիս, սպասարարաց եկեղեցոյս՝ յետ Հից

Այսպիսով՝ արձանագրենք, որ Հայոց դարձի թուագրութեան վերաբերեալ Հէնց Հայկական աւանդութեան մէջ որոշ շեղում կայ, որ տատանում է 301 եւ 306 թուականների միջեւ:

Արդի աշխատութիւններում այդ տարածայնութիւններն առաւել մեծ են, որը ցոյց է տալիս հետեւեալ ոչ լրիւ ցուցակը.

- Սէն-Մարտէն (J. Saint-Martin, *Mémoires historiques et géographiques sur l'Arménie*, I, Paris, 1818, էջ 437 եւ լրացուած՝ Lebeau, *Histoire du Bas-Empire*, I, էջ 764. հմմտ. A. Ter-Mikelian, *Die armenische Kirche*, Leipzig 1892, էջ 7) - 278 թ.
- Հ. Միք. Չամչեան (Պատմութիւն Հայոց, Կալկաթա, 1827, I, էջ 161) - Հայոց դարձը՝ 301 թ., - Գրիգորի օծումը՝ 302 թ.
- Հ. Յ. Գաթրճեան (Տիեզերական պատմութիւն, II, Վիեննա, 1852, էջ 477) - 305-310 թթ.
- Է. Դիլորիէ (E. Dulaurier, *Recherches sur la chronologie arménienne technique et historique*, Paris, 1859, էջ 47) - Տրդատի մկրտութիւնը եւ Հայոց դարձի առաջին տարին՝ 300 կամ 302, - Գրիգորի օծումը՝ 303-ի Սեպտեմբերից 304-ի Սեպտեմբեր

բարեպաշտ թագուհոյս գլխարկարիւն, Յիսուսեան միով քառասնի կատարել անխափան միմչեւ ի գալուստն Քրիստոսի: Եթէ ոք գարձանագրեալդ անփոյթ առնէ, դատապարտեալ եղիցի՝ ի Քրիստոսէ: Ի վեց :Ռ:Ն:Լ: եւ :Գ: /=*6433*/ ամացն Ադամալ[ի], :Ռ:Բ:Ժ: /=*1012*/ ամի մարմնանալոյ[ի] Աստուծոյն Բանի, :Զ:Լ:Ժ: ամի հաւատալոյ[ի] ի Քրիստոս Հայոց գրեցաւ յիշատակարանս ի ձեռն իմ՝ Բեմիլիամիւնէ: Բրոսսէն կարդում էր 718՝ 2ԸԺ. փոխանակ 711-ի՝ 2 եւ ԺԱ [շեղումների հիմնական պատճառը գրչի կատարած վրիպումներն են եւ ձեւակերպումների անմիատարրութիւնը. ընդ սմին վիմագրի առաջին տողում անհրաժեշտ է ընթերցել (ըստ գրչանկարի) ոչ թէ «Ի :Ն:Մ: Թ[ՌԻԻՆ] ՀԱՅՈՑ», այլ՝ «Ի :Ն:Մ:Թ: [ԹՌԻԻՆ] ՀԱՅՈՑ», այսինքն՝ 1010/1011 թ. - *Թարգմ.*]:

Հ. Գելցեր (H. Gelzer, *Die Anfänge der armenischen Kirche*, 1896, էջ 166, հմմտ. A. V. Harnack, *Die Mission und Ausbreitung des Christentums in den ersten drei Jahrhunderts*, II, Leipzig, 1906, էջ 171) - դարձը՝ մօտ 280 թ.

- Գրիգորի ձեռնադրութիւնը՝ 290-295-ի միջեւ

Ս. Վեբեր (S. Weber, *Die katholische Kirche in Armenien*, 1903, էջ 126-127) - 295 թ.

Լ. Դիւշեմ (Mgr L. Duchesne, *Histoire ancienne de l'Église*, II, 1908, էջ 32, ծնթ. 22) - 297-ից առաջ

Մ. արքեպ. Օրմանեան (Հայոց եկեղեցին եւ իր պատմութիւնը, վարդապետութիւնը..., Կ. Պոլիս, 1910) - 301 թ.

Հ: Յ. Աստուրեան (P. Asdurian, *Die politische Beziehungen zwischen Armenien und Rom*, 1911, էջ 138) - մօտ 300 թ.

Ֆ. Տուրնեբիզ (F. Tournebize, *Histoire politique et religieuse de l'Arménie*, Paris, 1911, էջ 428-ի ծնթ.) - 290-295-ի միջեւ, չքացաւելով նաեւ աւելի ուշ թուագրում՝ 300-ից յետոյ

Ն. Ադոնց (N. Adontz, *Mélanges Cumont*, II, 1936, էջ 513, ծնթ. 13. հմմտ. R. Grousset, *Histoire de l'Arménie des origines a 1071*, Paris, 1947, էջ 13) - 288 թ.

Հ. Ն. Ակինեան (N. Akinian, *Analecta Bollandiana*, 67, 1947, էջ 84 եւ «Հանդէս ամսօրեայում», 53, 1949, էջ 41) - 217 թ.

Ստ. Մալխասեանց (Ե՞րբ եւ հայերն ընդունել քրիստոնէութիւնը, - «Էջմիածին», 1944, Ա, էջ 22) - 279 թ.

Եր. Քասունի («Ակոս»-ում, 13, 1957) - դարձը՝ 291-ին, - Գրիգորի օծումը՝ 294-ին

Հ. Բաստրմաջեան (Հայոց պատմութիւն, 2-րդ հրատ., 1964) - 288 կամ 301 թ.:

Ուշագրաւ է, որ ըստ հեղինակների՝ իրարից շատ տարբեր փաստարկներն ու հաշուարկները յանգեցրել են միանման կամ բաւական մօտ եզրակացութիւնների: Միւս կողմից՝ որոշ հետազոտողներ, ինչպէս՝ Դիլորիէն, հաշուարկները կազմել են՝ յենուելով Գրիգորի բանտարկութեան ընդունուած տեւողութեան վրայ, ինչը մեզ բաւական ռիսկային մօտեցում է թուում: Ուրիշներն անհրաժեշտ են համարել որոշ մեծ կամ փոքր ժամանակային միջակայք ենթադրել բուն դարձի իրադարձութեան եւ Գրիգորի ձեռնադրման միջեւ: Յատկապէս Գելցերի մեկնաբանութիւնը, թէ մաքրագործման ձեռնարկը պէտք է որ դժուար եւ դանդաղ ընթացած լինէր, արժանի է յատուկ ուշադրութեան:

Տուրնեբիզը, ով թուարկուածներից ամենաերկարն է կանգ առել այս խրթին եւ հրապուրիչ խնդրի վրայ, հաւատացնում է, որ լուծումը պէտք է փնտրել միայն ըստ Տրդատի գահակալութեան թուագրութեան, սակայն դա եւս իր հերթին բաւականին վիճելի հարց է: 290 եւ 295 թթ. միջեւ թուագրելու օգտին նրա բերած պատճառաբանութիւնները զուրկ չեն հաւանականութիւնից. նման մեծ շուքով Կապադովկիա մեկնելու իրողութիւնը 303-305 թուերի միջեւ տեղադրելուն մեծագոյն խոչընդոտ է հանդիսանում քրիստոնէաների դէմ Դիոկղետիանոսի հալածանքը. նմանապէս՝ հնարաւոր է պատկերացնել այդպիսի ճամփորդութիւն 296-297 թուականներին, որոնց ընթացքում այդ տարածաշրջանը խիստ վտանգաւոր էր հռոմէապարսկական հակամարտութեան պատճառով: Այսուհանդերձ, նա ընդունում է, որ ուշագրաւ փաստարկներ կան Հայոց դարձը 300 թուականից այսկողմ բերելու հա-

մար<sup>40</sup>: Տեսնենք, թէ որոնք են այդ փաստարկները:

Նախ եւ առաջ մենք բախում ենք սուրբ Աթանազինչսի մասունքների խնդրին, որոնք Գրիգորն իր օծումից յետոյ ստացել էր Ղեւոնդիոս արքեպիսկոպոսից սուրբ Կարապետի մասունքների հետ միասին: Հակառակ Գուտշմիդի մեկնաբանութեան, թէ Աթանազինչսը հայկական Վահագն աստծոյ կերպարի ստեղծումն է<sup>41</sup>, կարծում ենք, որ պէտք է ընդունել այս անձի պատմականութիւնը, որին գովաբանում է ս. Բարսեղը եւ որը, լինելով Պեղատոյէի (Սեբաստիայի մօտ) եպիսկոպոսը, անվիճելիօրէն պատկանում է Դիոկղետիանոսի հալածանքների զոհերի թուին<sup>42</sup>: Նրա նահատակութեան մօտաւոր թուականը՝ 303-305-ի միջեւ, կարող է ծառայել որպէս terminus post quem Գրիգորի օծման ժամանակի համար, եթէ ընդունենք, որ նրա մասունքների փոխադրումը տեղի է ունեցել Ագաթանգեղոսի նշած հանգամանքներում, այլ ոչ թէ աւելի ուշ՝ Գրիգորի հայրապետութեան տարիներին, կամ էլ նոյնիսկ նրա անմիջական յաջորդների օրօք: Արդ, խոհեմ ենք համարում մինչեւ աւելի լայն տեղեկութիւնների հայթայթումն առայժմ մեր ուսումնասիրութիւնից դուրս թողնել այս փաստը, որը հնարաւոր է ճշգրիտ թուագրել եւ որը կարող է տեղի ունեցած լինել ոչ

40 F. Tournebize, *Ար. աշխ.*, էջ 411:  
41 A. von Gutschmid, *Agathangelos*, էջ 412-414: Այս վարկածի քննադատութիւնը տե՛ս Բ. Սարգիսեան, *Ագաթանգեղոս եւ իր բազմադարեայ գաղտնիքն* [Վեներիկ, 1890], էջ 216: Հմմտ. S. Weber, *Die katholische Kirche in Armenien*, էջ 222-223:  
42 Տե՛ս J. Muyldermans, *Athénogène* յօդուածը, "Dictionnaire d'histoire et de géographie ecclésiastique", V (1931), սիւն. 44-45; *Acta Sanctorum, Nov.*, II, 2 (Comm. martyrol. Hier.), 1931, էջ 394; *Propyl.*, ad. *Acta Sanctorum, Dec.*, 1940, էջ 394; P. Peeters, "Analecta Bollandiana"-ում, 60 (1942), էջ 107-108:

միայն Գրիգորի օծումից, այլեւ նրա հայրապետութիւնից յետոյ:

Ագաթանգեղոսի շարադրանքը ենթադրել է տալիս, որ Տրդատն իր հակաքրիստոնէական քաղաքականութեան մէջ օրինակ է վերցրել Դիոկղետիանոսից: Վահագոյն Օգոստոսին ուղղուած նրա նամակը, որը գետեղուած է Յուն. վարք-ում եւ վերաբերում է Դիոկղետիանոսի հրովարտակով պատժի ենթակայ քրիստոնեայ փախստականներին, արդեօք այս առումով աւելի նշանակալի է եւ արդեօք առիթ է տալիս ենթադրելու, որ 303-305 թթ. հալածանքների ժամանակ այս Արշակունին, դոնէ պաշտօնապէս, դեռեւս չէր հրաժարուել հեթանոսական հաւատից: Առնուազն պէտք է հաշուի առնել հռոմէական տիրակալի նկատմամբ Տրդատի ցուցաբերած իրօք անկեղծ երախտագրութիւնը, նրան դուր գալու եւ նրա հրամանը կատարելու փութաշանութիւնը եւ չվարանել Հայոց արքայի դարձը այս հովանաւոր կայսեր գահակալութիւնից յետոյ թուագրելու խնդրում: Քրիստոնէութիւն ընդունելու նման որոշումը Հռոմի վասալ արքայ Տրդատի կողմից Դիոկղետիանոսին ուղղուած իսկական մարտահրաւէր կը լինէր եւ, անկասկած, կը նշանակէր դաշինքի եւ հռոմէական հովանաւորութեան աւարտը, որի շնորհիւ էր միայն Մեծ Հայքի թագաւորութիւնը կարողանում դիմակայել սասանեան հզօրութեանը:

Դիոկղետիանոսի օրօք անպատկերացնելի՛ Հայոց արքայի հրապարակաւ դարձը եւ Գրիգորի օծումն արդեօք հնարաւոր է պատկերացնել այս կայսեր հրաժարականի հետեւած տարիներին: Եթէ կայսրութեան Արեւմտեան հատուածում Կոստանդիանոսի եւ Մաքսենցիոսի ձեռնարկած հաշտարարական միջոցառումների արդիւնքում այդ ժամանակից սկսեալ խաղաղութիւն շնորհուեց քրիստոնեաներին, ապա Արեւելեան հատուածում հալածանք-

ները շարունակուեցին առաւել դժգոհութեամբ՝ Օգոստոսի կարգավիճակ ստացած Գալերիոսի եւ նրա կեսար Մաքսիմինոս Դայայի ազդակով: Միայն 311 թ. Ապրիլին է, որ մահացու հիւանդ Գալերիոսը, ցանկանալով հաշտուել քրիստոնեաների աստծոյ հետ, մի հանդուրժողութեան հրովարտակ [édit de tolérance] հրապարակեց (Սարգիսի հրովարտակը): Հարց է առաջանում, թէ ինչպէս Տրդատը կարող էր համարձակուել իր դէմ հրահրել հռոմէական Արեւելքի մոլի հակաքրիստոնեայ տէրերի գայրոյթը, որոնց գայիսոնի ներքոյ նա գտնուում էր այս կամ այն չափով, եւ թէ ինչպէս Լուսաւորիչը կարող էր օրը ցերեկով այդպէս փառաւոր, մարդաշատ ուղեկցող խմբով ճամփորդութիւն կատարել եւ ամենայն հանդիսաւորութեամբ եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստանալ Կեսարիայում մի այնպիսի ժամանակ, երբ քրիստոնեաները պաշտօնապէս հալածանքի էին ենթակայ:

Այդուհանդերձ, որոշ փաստերի առկայութիւնը մտորումների տեղիք է տալիս: Եւսեբիոս Կեսարացու միջոցով մենք գիտենք, որ հեթանոսութեան պաշտպանութեան մոլեռանդութեամբ տարուած՝ Մաքսիմինոս Դայան, ով Արեւելքում յաջորդել էր Գալերիոսին, իսկական կրօնական պատերազմ է սկսում հայերի՝ «վաղուց ի վեր [ի սկզբանէ անտի] Հռոմին բարեկամ եւ դաշնակից [մարտակից] ազգի» դէմ, որոնց ստիպում էր վերականգնել կուռքերի պաշտամունքը. ձեռնարկում, որը լիովին ձախողուեց իրենց շահերին պաշտպան կանգնածների դիմակայութեան շնորհիւ<sup>43</sup>: Այս

43 Եւսեբիոս, *Պատմութիւն Եկեղեցոյ*, IX, 8, 2-4, հրատ. Dindorff, Leipzig (1890), էջ 429-430. τούτοις προσεπανίσταται τῷ τυράννῳ ὁ πρὸς Ἀρμενίου πόλεμος, ἄνδρας ἐξ ἀρχαίου φιλοῦς τε καὶ συμμάχους Ῥωμαίων, οὓς καὶ αὐτοὺς χριστιανούς ὄντας τὴν τὸ θεῖον εὐσεβείαν, δια σπουδῆς ποιουμένων καὶ ὁ θεοομιῆς εἰδῶλοις θυεῖν καὶ δαίμοσι ἐπαναγκάσα πεπειραμένους ἐχθροὺς ἀντι φίλον καὶ ὁ πολεμίου ἀντι συμμάχων κατεστήσατο [«Հանդերձ

միջադէպը կարող է թուագրուել 311/312 թուականով, այսինքն՝ այն ժամանակաշրջանով, երբ անտեսելով Սարգիսի հրովարտակը եւ իր արեւմտեան թագակիցների հաշտարարական մղումները՝ Դայան հաղուագիւտ դաժանութեամբ մոլեղնում էր իր իշխանութեան տակ գտնուող քրիստոնեաների դէմ<sup>44</sup>: Լ. Դիւչէնի կարծիքով՝ Եւսեբիոսը յիշատակում է Գալերիոսի յաղթանակից յետոյ Հռոմի տիրապետութեան տակ անցած անդրտիգրիսեան գաւառների հայերին, որոնք խուսափել էին Դիոկղետիանոսի եւ Գալերիոսի հրովարտակներից<sup>45</sup>: Ըստ Աստուրեանի՝ «բարեկամ» եւ «դաշնակից» անվանները աւելի շատ համապատասխանում են Հայոց թագաւորութեան, քան թէ անդրտիգրիսեան շրջանների բնակիչներին, ովքեր այդ ժամանակ իրապէս հռոմէական

ստիպման յարեալ եւ պատերազմ ի բռնաորէն ընդդէմ Հայոց, որք ի սկզբանէ անտի բարեկամք եւ մարտակիցք էին Հռոմոնց. գորս քրիստոնեայ եւ յերկրպագութիւն ճշմարտիւն Աստուծոյ փոյս, անդէրով բռնաորիւն ատելոյն Աստուծոյ՝ զի կոոց եւ դիւսց գոհեացեմ, փոխանակ բարեկամաց թշնամիս, եւ փոխանակ ցիպակացաց պատերազմոյն ընդդէմ իր յարոյց գնոսա: Ծարունակութեան մէջ՝ «Արդ ան հանդերձ գարսաք իրովք ի պատերազմի անդ ընդդէմ Հայոց ի բազում ուրեք հարեալ վատթարէր ատաշի անցա». ըստ՝ *Եւսեբիոսի Կեսարացոյ, Պատմութիւն Եկեղեցոյ*. Յեղեալ յատրոյն ի հայ ի հիմն գերորդ դարս. Պարզաբանեալ անթարգմանութեամբ ի յոյն բնագրէն ի ձեռն Հ. Ա. Վրդ. Ծարեան, Վեներիկ - Ս. Ղազար, 1877, էջ 688-689 - թարգմ.]:

44 Տե՛ս J. Moreau, *La persécution du christianisme dans l'Empire romain*, Paris, 1956, էջ 131-133:  
45 L. Duchesne, *Histoire ancienne de l'Église*, II (1908), էջ 32, ծնթ. 2 եւ "Mélange Nicole"-ում (Genève, 1905), էջ 105-107: Հմմտ. Հ. Պ. Անանեան, "Le Musée", 1961 ["La data e le circostanze della consecrazione di S. Gregorio Illuminatore": հայերէնը՝ Հ. Պ. Վրդ. Անանեան, *Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները*, Գալատիպոս - «Բազմալեզու» (1958-1959), ապա՝ Վեներիկ - Ս. Ղազար, 1960 եւ 1998], էջ 344 եւ յետոյ, որը փորձում է գարգացնել այս տեսակետը բազմաթիւ եւ երբեմն սուր փաստարկներով: J. Mécérian, *Histoire et institution de l'Église arménienne*, էջ 24-25:

քաղաքացիներ էին<sup>46</sup>: Սակայն այս մեկնաբանությունը բախուում է այն փաստին, որ Մեծ Հայքը, չնայած գործնականում հռոմեական պրոտեկտորատի ներքոյ, այդուհանդերձ մնում էր Արեւելեան մասի Օգոստոսի իրաւասութիւնից դուրս: Ինչպէ՞ս կարող էր վերջինս միջամտել մի պետութեան կրօնական քաղաքականութեանը, որն սկզբունքօրէն անկախ էր եւ ունէր իր սեփական օրէնքները: Վերադառնալով Դիւչէնի վարկածին՝ նշենք, որ Մաքսիմիանոսի միջամտութիւնը Տիգրիսից այնկողմ գտնուող երկրների գործերին, որոնք վարչականօրէն հռոմեական տիրապետութեան տակ էին, պէտք է բացառել: Այնուամենայնիւ, հաշուի առնելով մերձաւոր կապերը, որ ինստիտուտների, սովորութիւնների, բարքերի մակարդակով այս տարածքները պահպանում էին Հայոց թագաւորութեան հետ, կասկածելի է դառնում, որ տեղական սատրապներն իրենց երկրներում թոյլ տուած լինէին քրիստոնէութեան զարգացումը հռոմեական իշխանութիւններին լրջօրէն անհանգստացնելու աստիճանի, եթէ իրենց անուանական տէրը՝ Հայոց արքան դրա օրինակ չծառայէր: Այլ խօսքով՝ հարց է ծագում, թէ արդեօ՞ք Մաքսիմիանոս Դայայի ազդեցական հռոմեական օրէնքների ենթակայութեան տակ գտնուող հայերի հանդէպ հակադարձ ունեցիւմ չէր Տրդատ Գ-ի կողմից քրիստոնէութեան պաշտօնապէս ընդունման<sup>47</sup>:

46 Asdurian, *Die politische Beziehungen zwischen Armenien und Rom*, էջ 139, ծնթ. 1:  
 47 Ամբողջովիւ ընդունելով Լ. Դիւչէնի ստաջ բաշած վարկածը՝ Ժ. Մետերեանը նկատում է (նշ. աշխ., էջ 25). «Պատմաբանը ենթադրում է, որ Հայաստանի պաշտօնական դարձը արդէն տեղի էր ունեցել 297 թ. ստաջ. սակայն այն իջեցնելով մինչեւ 314 թուականը, Միլանի հրովարտակից յետոյ, տրուած բացատրութիւնը բաւարար չենք համարում: Արդեօ՞ք այս սատրապութիւնները քրիստոնէութիւն էին ընդունել այն ժամանակ, երբ գտնուում էին Հայոց կենտրոնական պետականութեան իրաւասութեան տակ, 297 թ. ստաջ: Բայց այդ դէպքում պէտք է աւելի ընդարձակել

Այդուհանդերձ, հակառակ ժամանակագրական վերոքննեալ հաշուարկների, որոնք, անկախ նշանակալի տատանումներից, բոլորն էլ համամիտ են Հայոց դարձը հռոմեական կայսրութեան դարձից առաջ թուագրելու հարցում, վերջին շրջանի հետազօտութիւնները հակուած են հաւաստելու հակառակ թեզը: Այս թեզի օգտին վկայում է Ագաթանգեղոսի յունա-արաբական խմբագրութիւնը, որտեղ ասուում է, որ Հայոց դարձի լուրն առնելով՝ Կոստանդինոս կայսրը շտապում է Հռոմ հրաւիրել Տրդատին եւ Գրիգորին<sup>48</sup>: Տեսնենք, թէ ինչ այլ փաստարկներ են բերում այս տեսակէտին յարողները:

Մի կողմ ենք դնում Յ. Մանանդեանի դիրքորոշումը. Տրդատի գահ բարձրանալու եւ Դիոկղետիանոսի 15-րդ տարուայ միջեւ Կարծեցեալ-Սեբէոսի կազմած ժամանակագրական համաձայնեցումը (Macler, էջ 22) հակադրելով Գրիգորի օձման եւ Տրդատի թագաւորութեան 17-րդ տարուայ միջեւ Մովսէս Խորենացու ժամանակագրական համաձայնեցումը՝ նա որպէս Հայոց դարձի տարի ստանում է 315 թուականը<sup>49</sup>: Սակայն Սեբէոսի անուան տակ ներկայացուած ժամանակագրական ցանկերի սխալական, նոյնիսկ անհեթեթ բնոյթը արժեզրկում է հայ հետազօտողի հաշուարկները, որոնք, ի դէպ, ընդօրինակում է Անանեանը<sup>50</sup>:

Պետրոս Սեբաստացու կերպարը, որը յունա-արաբական խմբագրութեան բացայայտումն է, կարո՞ղ է արդեօք մեզ ժամանակագրական որեւէ ուղեցոյց տալ: Ժ. Գարիտի խորթմական քննութիւնը թոյլ

դէպի արեւմուտք, դէպի Եփրատ, այն տարածքը, որը զենքով դիմադրութիւն է ցոյց տուել...»:  
 48 Vg. 174; Va, 187 (Garitte, էջ 106):  
 49 Յ. Մանանդեան, *Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան*, Բ, 1957, յատկապէս՝ էջ 127:  
 50 Հ. Պ. Անանեան, նշ. աշխ., էջ 72-73 [Վեներտիկ - Ս. Ղազար, 1998, էջ 34-37]:

է տալիս տարբերելու այս անձնաւորութեանը Սեբաստիայի համանուն մէկ այլ եպիսկոպոսից, որը Բարսեղ Կեսարացու եւ Գրիգոր Նիւսացու եղբայրն էր<sup>51</sup>: Հայր Անանեանն իր հերթին մէջբերում է մի սրբագրական բնագրում գտած հետեւեալ յիշատակութիւնը՝ «Պետրոս Սեբաստիոյ եպիսկոպոս, բարեկամ ս. Աթանագինէսի», որից եզրակացնում է, որ Պետրոսի եպիսկոպոսութիւնը պէտք է ընկնէր 303 եւ 320 թուականների միջեւ (դրանցից առաջինը Աթանագինէսի նահատակութեան հաւանական թուականն է, երկրորդը՝ Պետրոս II-ի կողմից Սեբաստիայի Քառասուն նահատակների մասունքների փոխադրման), որն այդպիսով եղել է Աթանագինէսի անմիջական յաջորդը<sup>52</sup>: Այս վարկածն, այնուամենայնիւ, թոյլ չի տալիս բացառել a priori, որ Գրիգորի օձումը նախորդել է Կոստանդինոսի դարձին:

Պետրոս Սեբաստացու խնդրին կարելի է աւելացնել նաեւ Ղեւոնդիոս Կեսարացու պարագան<sup>53</sup>: Այն փաստը, որ այս հայրապետի անձն անվիճելիօրէն չի հաւաստուած մինչեւ Նիկիայի ժողովը (325 թ.), չի հակասում խնդրոյ առարկայ վարկածին, քանի որ հնարաւոր է նրա արքեպիսկոպոսութեան սկիզբը տանել մինչեւ Դ. դարի սկիզբը եւ նոյնիսկ աւելի վաղ<sup>54</sup>: Դեռ աւելին, հիմնուելով լատիներէն եւ ասորերէն հին կանոնագրքային ժողովածոների վկայութեան վրայ, որոնց պէտք է աւելացնել

51 G. Garitte, նշ. աշխ., էջ 229-230:  
 52 Հ. Պ. Անանեան, նշ. աշխ., էջ 345 եւ յետոյ [Վեներտիկ - Ս. Ղազար, 1998, էջ 70, 78-79: Հմմտ. վարք եւ վկայաբանութիւնը սրբոց. Հատընտիր քաղեայք ի ճաղատարաց, հտ. Ա., Վեներտիկ - Ս. Ղազար, 1874, էջ 64 - թարգմ.]:  
 53 Ղեւոնդիոս Կեսարացին յայտնի է Նիկիայի Հայրերի ցուցակներից. H. Gelzer, H. Hilgenfeld, O. Cuntz, *Patrum Nicaenorum nomina*, Leipzig 1898, էջ 224a; E. Honigman, *La liste originale des Pères de Nicée*, "Byzantion", 14 (1939), էջ 17-76. հմմտ. Garitte, նշ. աշխ., էջ 222:  
 54 Հմմտ. Gelzer, *Die Anfänge*, էջ 166:

նաեւ հայկական հաւաքածոն՝ Ժ. Լեբոնը հետեւողականօրէն ցոյց է տուել, որ մի եկեղեցական ժողով է գումարուել Կապադովիայի Կեսարիայում Անկիւրիայի եւ Նէոկեսարիայի ժողովների միջեւ, այսինքն՝ 314 եւ 319 թուականների միջակայքում<sup>55</sup>: Արդ, Ժ. Գարիտը հաւանական է համարում, որ Գրիգորին օձելու համար Ղեւոնդիոսի հրաւերով գումարուած եպիսկոպոսների ժողովը Յուն. վարք-ում պահպանուած «յիշողութիւնն» է Կեսարիայի այս ժողովի, որի մասնակիցների թիւը նոյնպէս քսան է<sup>56</sup>: Այս դիտարկման համաձայն՝ Հայոց առաջին հայրապետի ձեռնադրման թուականը, որպէս հետեւանք, կը լինի նոյն թուականը, որ Լեբոնը տալիս է Կեսարիայի ժողովին, որն, ըստ նրա՝ տեղի է ունեցել 314 թ. ամռանը, իբրեւ շարունակութիւն Անկիւրիայի ժողովի<sup>57</sup>: Հայր Անանեանը

55 J. Lebon, *Sur un concile de Césarée*, - "Le Muséon", 51, 1938, էջ 88-132: Այս ժողովին մասնակցած եպիսկոպոսների ցուցակը տրուած է ասորերէն երկու կանոնագրքային տարբերակներով. այն կցուած է Նիկիայի Հայրերի ցուցակին, որի հայկական տարբերակը գետեղուած է Վիեննայի մի ձեռագրում (Vindobon. 810), տե՛ս Lebon, էջ 121: Հէնց այստեղ էլ գտնում ենք Ղեւոնդիոսի անունը, սակայն Պետրոս Սեբաստացու անունն այնտեղ բացակայում է:  
 56 Garitte, նշ. աշխ., էջ 131:  
 57 Կանոնագրքային ժողովածոներում տեղ գտած որոշ ձեւակերպումներ սերտօրէն իրար են կապում Անկիւրիայի եւ Կեսարիայի ժողովները: Լեբոնը նկատում է, որ «եթէ Անկիւրիայի վեցերորդ կանոնն ապացուցում է, որ ժողովը կայացել է այս քաղաքում, 314 թուականին, Ջատիկի եւ Պենտեկոստէի միջեւ, ապա Կեսարիայի ժողովը գումարուել է այս նոյն ամսուայ ընթացքում: Իրադարձութիւնները ներկայանում եւ ընկալում են շատ բնական եւ հաւանաբար, ճշմարիտ ձեւով, եթէ մտածենք, որ վերջին հալածանքների "lapsus"-ների ճակատագիրը որոշելուց եւ կարգապահութեան ու բարոյականութեան մի քանի հարցեր լուծելուց յետոյ, որոշ եպիսկոպոսներ, ովքեր անցնում էին Կեսարիայով, կրկին հաւաքուել են, անկասկած, նոյն գաւառի իրենց գործընկերների հետ՝ այդ շրջանում ծաւալուած անբարոյականութեան որոշակի դրսևորումներ դատա-

Հասցնում է այն մինչև աշուն<sup>58</sup>: Իրադարձությունների նման նոյնացումների արժեքն անհերքելի է: Իրօք, տեղին է համարել, որ դրանք մեզ շատ են մօտեցնում մինչ այժմ անընդհատ վիճարկուած խնդրի լուծմանը:

Եթէ փաստերը վերցնենք իրենց ամբողջութեան մէջ, ապա մի վերջին վերլուծութեան արդիւնքում անհաւանական չի թուայ, որ Տրդատն ընդունել է նոր հաւատը Դիոկղետիանոսի հրաժարականի (305 թ. Մայիսի 1) եւ Մաքսիմինոս Դայայի պատերազմի (311-312 թթ.) միջեւ ընկած ժամանակահատուածում: Իրեն պարտաւոր չհամարելով Գալերիոսին ցուցաբերել նոյն վերաբերմունքը եւ նոյն ենթակայութիւնը, ինչ ցուցաբերում էր հեռացած կայսերը՝ Մեծ Հայքի արքան գտել է, որ եկել է ժամանակը՝ հրապարակայնացնելու մի վճիռ, որն, անկասկած, արդէն հասունացել էր որոշակի ժամանակի ընթացքում: Չնայած դրան, դժուար ընդունելի է մնում այն հանգամանքը, որ Գրիգորի ուղեւորութիւնը եւ ձեռնադրումը Կապադովկիայի Կեսարիայում կայացած լինի մինչև քաղաքական դաշտից Մաքսիմինոս Դայայի հեռացումը եւ Լիկինիոսի միջամտութիւնը Արեւելքում քրիստոնէութեան ազատ դաւանութեան օգտին (313 թ. Յունիս): Այս պատճառով Հայոց քրիստոնէութեան ընդունմանը [այսինքն՝ Վիրապից դուրս գալուն - թարգմ.] անմիջապէս յաջորդելու փոխարէն, Գրիգորի օծումը եւ Բագաւանում մկրտութիւնը, ըստ երեւոյթին, տեղի են ունեցել մի քանի տարի անց: Այս առաւել հանգամանակի տեսակէտը, որ արդէն նախանշել են որոշ պատմաբաններ, նախընտրելի է նաեւ նրանով, որ հաշուի է առնում այն խոչընդոտները, որոնց Գրիգորն

պարտելու համար, այնտեղ բերելով պատժիչ կանոններ:

58 Հ. Պ. Անանեան, Աշ. աշխ., էջ 343 [Վեճետիկ - Ս. Ղազար, 1998, էջ 79]:

ու Տրդատը հանդիպել են հիմնական հեթանոսական պաշտամունքները կործանելու ընթացքում:

Վերջում կը ցանկանայինք համառօտ անդրադառնալ Տրդատ Գ-ի՝ անկախ ամէն ինչից բաւական բացառիկ դարձի շարժառիթներին:

Առաջին հերթին, Հռոմի հովանաւորելի այս շրջադարձային քայլը պէտք է դիտել որպէս Հայաստանի կրօնական անկախութեան հաստատում Սասանեան Պարսկաստանի նկատմամբ: Կասկածից վեր է, որ մագդէականութեան քարոզումը, որն իր գագաթնակէտին էր հասել Շապուհ Ա-ի եւ իր յաջորդների տիրակալութեան օրօք, շարունակում էր քիչ թէ շատ բացայայտ կերպով գործել Մեծ Հայքում եւ յատկապէս նրա սահմանամերձ շրջաններում: Ամենայն հաւանականութեամբ, այն ակտիւօրէն սատարում էր հռոմէատեաց կուսակցութեան ներկայացուցիչների կողմից՝ այդպիսով ծառայելով քաղաքական նպատակների: Զանգուածային անցումը նոր կրօնին արմատական միջոց էր՝ արագ վերացնելու այս միտումները, որ քիչ թէ շատ կարճատեւ ընթացքում սպառնում էին կործանել ազգային միապետութիւնը:

Թւում է, թէ անհրաժեշտ է, ըստ ամենայնի, աւելի լայն տեղ տալ ներքին անվտանգութեան եւ կայունութեան պատճառներին: Նախաքրիստոնէական Հայաստանում ժողովրդական պաշտամունքի ցրուածութիւնը բազում կուռքերի միջեւ գրեթէ անյաղթահարելի խոչընդոտ էր երկրի կրօնական միասնականացման համար: Միասնականացում, որին Տրդատը, թւում է, թէ ձգտում էր հասնել՝ հաստատելով կրճատուած (մենք կասէինք անգամ «մաքրագործուած») բազմաստուածութեան համակարգ, որ ունէր յստակ ( եւ պարադօքսալ կերպով) մագդէական միտում: Կուռքերի քրմերը, որ շահագրգռուած էին կրօնական ապակենտրոնացման պահպանման

հարցում, չէին կարող հաւանութիւն տալ սրբավայրերում, ի հեճուկա տեղական պաշտամունքների, մի քանի մեծ աստուածութիւններին, ինչպէս, օրինակ՝ Արամազդին եւ Անահիտին տրուած նախապատուութեանը, որոնք, հաւանաբար, պահպանում էին նախկինում Իրանից եկած մոգերի կողմից պարտադրուած հակակոսապաշտական ուժերի հետքերը: Հոգեւորականութեան շրջանում եղած այդ հակազդեցութիւնը մտահոգիչ էր դառնում այնքանով, որքանով քրմերի դասը, հսկայական հողատիրոյթների եւ հարստութեան հետ միասին նաեւ նշանակալի ազդեցութիւն ունէր ժողովրդի շրջանում: Որքան կարելի է հասկանալ, քրմերը, միաւորուած տեղական նախարարների (սատրապների) հետ, ովքեր մեծապէս ընդդիմադիր էին Արշակունեաց միապետութեան նկատմամբ, բաւականաչափ հեղինակութիւն ունէին ռամիկ եւ նա-

խապաշարուած ժողովրդի մօտ՝ հնարաւոր ապստամբութեան մէջ նրան ներքաշելու համար: Այսպիսով, բազմատեսակ կուռքերի պաշտամունքի քողի տակ ծնունդ էր առնում թագաւորական իշխանութեան նկատմամբ ապստամբական վտանգաւոր տարրը:

Սակայն այս, ինչպէս եւ այլ շարժառիթներ, որ տուեալ պահին մենք բաց ենք թողնում, խամրում են սուրբ Գրիգորի առաքելութեան եւ կերպարի հզօրութեան առջեւ: Բացի այդ, վերջինս, ըստ ամենայնի, յարաբերականօրէն բարենպաստ հող էր գտել մի տիրակալի մօտ, ով, չնայած հռոմէական օրինակին հետեւելով, ներքաշուել էր հակաքրիստոնէական ձեռնարկումների մէջ, բայց եւ այնպէս ներքուստ կրում էր քրիստոնէացուած պետութեան մէջ անցկացրած տարիների ու դաստիարակութեան ազդեցութիւնը: